



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՆՐԱՄԱՆ

Թիվ 20-Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ԿՆԻՔՆԵՐԻ ՁԵՎԸ, ՊԵՏԱԿԱՆ, ՈՉ
ՊԵՏԱԿԱՆ ԿՆԻՔՆԵՐԻ ԵՎ
ԴՐՈՇՄԱԿՆԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ, ԴՐԱՆՑ
ՊԱՏՎԻՐՄԱՆ, ՀԱՏԿԱՑՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ,
ՈՉՆՉԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 4-ի 1445-Ն որոշման համաձայն՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում և ենթակա կառուցվածքային ստորաբաժանումներում օգտագործվող պետական կնիքների ձևը, պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների նկարագրերը սահմանելու, դրանց պատվիրման, հատկացման, պահպանման, ոչնչացման կարգը՝ համաձայն հավելված 1-ի,

2) «ՀՀ ոստիկանությունում օգտագործվող ՀՀ պետական կնիքների ձևը՝ համաձայն հավելված 2-ի,

3) «ՀՀ ոստիկանությունում օգտագործվող պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների հաշվառման մատյանի ձևը՝ համաձայն հավելված 3-ի:

2. ՀՀ ոստիկանության պետի աշխատակազմի և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝ հրամանն ուժի մեջ մտնելուց հետո 2-րդ հավելվածով հաստատված օրինակելի ձևին համապատասխանող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների պետական կնիքները թողնել անփոփոխ, իսկ օրինակելի ձևին չհամապատասխանող պետական կնիքները համապատասխանեցնելու, ինչպես նաև հետագա օգտագործման համար անհրաժեշտ պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների պատվիրման գործընթացը կազմակերպել սույն հրամանով սահմանված կարգով:

3. ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետին՝ սույն հրամանով հաստատված կարգի համաձայն՝ ՀՀ ոստիկանության պետի աշխատակազմից ներկայացված հայտերի հիման վրա կազմակերպել պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների պատվիրման և պատրաստման աշխատանքները, ինչպես նաև ապահովել պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների հաշվառման մատյանների պատրաստումը:

4. ՀՀ ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչության պետ-գլխավոր ֆինանսիստին՝ ապահովել պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների պատրաստման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը:

5. Մինչ նոր մատյանների տրամադրումն օգտագործել կնիքների և դրոշմների (շտամպ) հաշվառման մատյանները:

6. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ ոստիկանության պետի աշխատակազմի ղեկավարին:

7. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին, քաղաքացիական ծառայողներին և քաղաքացիական աշխատանք կատարողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ



Վ.ՕՍԻՊՅԱՆ

«03», 08 2019թ.

ք.Երևան

Կ Ա Ր Գ

ՀՀ ոստիկանությունում օգտագործվող պետական կնիքների ձևերի, պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների նկարագրերը սահմանելու, դրանց պատվիրման, հատկացման, պահպանման, ոչնչացման

ԳԼՈՒԽ I

Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում է ՀՀ ոստիկանությունում և ենթակա կառուցվածքային ստորաբաժանումներում օգտագործվող պետական կնիքների ձևը, պետական, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների նկարագրերը, պատվիրելու, հատկացնելու և ՀՀ ոստիկանության ծառայողների (աշխատողների) կողմից պահպանելու, ոչնչացնելու կարգը:

2. ՀՀ ոստիկանությունում պետական կնիքները նախատեսված են համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների և ծառայողների ստորագրությունները, իրավական ակտերը, ինչպես նաև այլ փաստաթղթերն ու դրանց պատճենները վավերացնելու համար:

3. Ոչ պետական կնիքները և դրոշմակնիքները նախատեսված են ՀՀ ոստիկանության հաշվեկշռում գտնվող գույքը և փաստաթղթերը կնքելու համար:

4. ՀՀ ոստիկանության յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանում պետք է ունենա միայն մեկ պետական կնիք: Ստորաբաժանման ղեկավարի կողմից ՀՀ ոստիկանության պետի աշխատակազմի ղեկավարին (*այսուհետ՝ Աշխատակազմ*) ներկայացված զեկուցագրի (*նշելով նպատակը՝ բավարար հիմնավորմամբ*) հիման վրա, ոստիկանության պետի թույլտվությամբ կարող է հատկացվել լրացուցիչ պետական կնիք՝ «2» թվի նշումով:

5. Պետական կնիքների տնօրինման, պահպանման և օգտագործման համար պատասխանատվություն են կրում ստորաբաժանումների պետերը, ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների համար՝ պատասխանատու աշխատակիցները, իսկ նրանց բացակայության դեպքում՝ օրենքով սահմանված կարգով նրանց փոխարինողները:

6. Բոլոր տեսակի փաստաթղթերը թույլատրվում է կնքել ցանկացած գույնով՝ բացառությամբ սևի՝ պատճենի չնմանվելու նկատառումներից ելնելով:

